




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2756

0.7930/7826



ԽԱՂՆԵՐԳ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



ՀԱՂԱՐԱՐ

891.996

Ա-43

ՍԱԽԵԼԳԱՄԻ

С.1930/182

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



-5 FEB 2013

Ua2103

ZU40F UZUFUF


891.995

U-43

ԽԱՂ

ՈՒ

ՅԵՐԳ



ՍԱԽԵԼԳԱՄԻ

ՎԵՐՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

Պետհրատ-ի 2-րդ տպ.,
 Լենինի փողոց № 3.
 Պատվեր 207. տիրաժ
 1000. Գլավլիտ 1150.



59327.66

Հակոբ Աղաբաբը մեր այն գրողներից է, վոր հատկապես զբաղվել ու խորացրել է մանկական գրականությունը, մշակելով արտահայտության համապատասխան, յուրահատուկ ձևեր:

Վորպես մանկական բանաստեղծ, նա ստեղծել է պեղարվեստական մանկական գրականության մի ամբողջ աշխարհ: Շատ ընդարձակ է նրա տեսողության դաշտը և բազմապիսի յեն նյութերը. մանուկը, սկսած ծնած ուրից մինչև պատանի հասակը՝ մոր գրկում, ինքն իր հետ, մենակ, ընտանիքում, բակում, ընկերների շրջանում, դպրոցում, փողոցում, կենդանիների և թռչունների աշխարհում, բնության ծոցում: Բնությունը—արևը, դաշտն ու առուն, ծառը, կենդանին, թռչունը, միջատը, անգամ տերևը յուրահատուկ պատկերներով և ձայներով լեզու յեն առնում Աղաբաբի վոտանավորների մեջ և հեքիաթներում: Իսկ այս ամբողջի հիմքում դրված է խաղի և աշխատանքի գաղափարը:

Մանուկների համար այնքան սիրելի, գրավիչ և մատչելի նրա բանաստեղծությունները, աշխատանքի, «խաղ ու յերգի» բուռն տրամադրություն են ստեղծում մանկան և պատանու մեջ: Պատահական չե ուրեմն, վոր Աղաբաբն իր մանկական գրվածքներով մինչև որս ել անսպառ շտեմարան է մնում մեր յերաժիշտների համար:

Իր 25-ամյակը տոնած և արդեն կազմակերպված մանկական գրողի համբավ ուներ Հ. Աղաբաբը, յերբ Խորհրդային կարգերը հաստատվեցին մեզ մոտ: Հակոբ Աղաբաբը մի լուպե անգամ ցած չդրեց իր գրիչը: Վեցից տասնևմեկ տարեկան խորհրդային մանուկը շարունակեց մնալ նրա գիտողության և ուսումնասիրության կենտրոնում:

Աղաբաբն առաջադիմելու, նոր դադափարներով տոգորվելու մեծ յեռանդ ցուցադրեց և համեմատաբար կարճ ժամակամիջոցում կարողացավ մանկան հասկանալի լեզվով յերգել «Հոկտեմբերը», մանավանդ, վոր նա իր նախահոկտեմբերյան յերգերի մեջ արդեն իսկ հնչեցրել եր աշխատանքի դադափարը: Հոկտեմբերիկը, պիոները, կոմյերիտը, աշակերտը, դպրոցի կյանքը, կարմիր փողկապը, գլուզն ու քաղաքը, մայիսյան տոնը, Լենինն ու մանուկը, մուրճն ու մանգաղը, վորպես սոցիալիստական շինարարության ազդանշաններ ու նեցուկներ, իրենց արտահայտությունը գտան Աղաբաբի յետհոկտեմբերյան գրվածքների մեջ և զարգարեցին «Կարմիր ծիլերի» եջերը: Նրա յերգերը լայն մասսայականություն գտան դպրոցականներին և պիոներներին շրջանում:

«Յեվ այսօր, յերբ նա չկա, յերբ մենք հիշում ենք նրա գրվածքները, գլխավորապես մանկական աշխարհից, մանկան կյանքից, պիտի շեշտենք, վոր յեթե մեր գրականությունն ունի Ղ. Աղայան, Հով. Թումանյան, Ա. Խնկոյան, ապա Հ. Աղաբաբը ևս իրավունք ունի մտնելու այդ գրողների շարքը թե իր գրվածքների մանկական վորակով և թե իբր մեկը՝ մանուկ սերնդին սիրելի գրողներից»:

Աղաբաբի մահից հետո ել նրա գրվածքները դեռ շարունակում են հրատարակվել մեր մանկական հանդեսներում: («Կարմիր ծիլեր», «Հոկտեմբերիկ»):

Այս փոքրիկ ժողովածուն, վորն իր մեջ ամփոփում է նրա բազմաթիվ խաղ ու պարերի, մանկական յերգերի, լեզենդների և ժողովրդական հեքիաթների մի մասը միայն, գալիս է մասամբ լրացնելու մեր մանկական, ինքնուրույն գրականության պակասը և նյութ ծառայելու պիոներական ժամանցների, դըպրոցական յերեկոթյունների, բեմադրությունների, ինչպես և մասսայական ընթերցանության համար:

Հրատարակչություն

ԽԱՂ

ՈՒ

ՅԵՐԳ



ԻՄ ԾԱՂԻԿՆԵՐԸ

Իմ ծաղիկները կարմիր են,
կարմիր, լալազաւր.
Բուրում են կարմիր Մայիսի
Վաղդին հավասար:

Նրանք ծնվել են արեւի
Բոսոր շողերով,
Նրանք սնվել են վաղորդյան
Պաղ-պաղ ցողերով:

Մեկը մեր կյանքի աղբյուրն է
Անըսպառ, անվերջ,
Մյուսը նոր կյանքի զառ-հուրն է
Մշտավառ, անշեջ:

Են կյանք աղբյուրը
Իր կաթն է խմցրել նրանց:
Են վառ զառ-հուրը՝
Իր զարդն է կպցրել նրանց:

Իմ ծաղիկները խնամում եմ,
Վոր պսակ հյուսեմ,
Զարդարեմ քաջ հերոսի
Ճակատը վսեմ,—

Ում կամքն ե խիղախ
Ու խոսքը անվախ, անվհեր,
Ում գործն ե հզոր
Ու անունը հավերժ անմեռ:

Իմ ծաղիկները խնամում եմ
Հենց նրա համար,
Վոր կապեմ շքեղ Մայիսյան
Հաղթական կամար:

Զարդարեմ ուղին
Հզոր գալիքի,
Ուր չենք հանգիստի մենք
Ցավ ու կարիքի:—

1926 թ.



ՀՈԿՏԵՄԵՐԻԿԻՆ

Արշալույսի լուսաշողախ
Շողն ես դու,
Վոր գալիս ե ու աչքերս
Բաց անում,
Առավոտվա բյուրեղացած
Ցողն ես դու,
Վոր գալիս ե ու յերեսս
Թաց անում...
Են շընկշընկան հով ու գովի
Հեն ես դու,
Վոր գալիս ե ու յերեսիս
Զարնվում,
Են ճըճկան թռչունների
Թեն ես դու,
Վոր ենքան ել հեշտությամբ չի
Բռնվում...

1926 թ.



Կ Ի Մ Ա

— Խաղ —

Հոկտեմբերյան են նոր տոնին
Տիկնի կնունք սարքեց Սոնեն.

Կնունք սարքեց,

Տունը կարգեց,

Տիկնիկն առավ, եսպես յերգեց. —

— Տեսեք, ի՜նչպես տեղն է քեֆը,

Կարմրաթուշիկ իմ տիկնիկի,

Հրես կգա ընկեր շեֆը,

Վոր նոր ձևով նրան կնքի:

— Ջան, ջան...

Կնունք կանենք մենք նոր ձևի,

Հնին ել մենք չենք հետևի,

Հյուր ել ունեմ մեր կնունքին,
Վնչ թե մեկը — ամբողջ խմբով,
Իմաց տվի յես ամենքին.

Հիմա կգան և զիտեք ո՞վ. —
Առաջինը՝

Վարդանուշն է ու Նիկոլը,

Են վառվառն կոմսոմոլը,

Իսկ յերկրորդը՝

Մեծ յեղբայրն է տիկնիկիս մոր

Հրահանգիչ՝ ընկեր Գրիգոր:

Յեվ յերրորդը՝

Նախագահն է, տեղկոմի հետ,

Ու Գուրգենը պրոլետ-պոետ,

Իսկ իմ շեֆը...

Բոյին մեռնեմ... Ի՜նչ ասեմ ձեզ,

Ուսանող ե մեր բանֆակի,

Ասած խոսքը կտրուկ ենպես՝

Հազար բերան հեշտ կիսակի:

— Ջան, ջան...

Հյուրերս յեկան.

Ա՛յ բարև ձեզ,

Խնդրեմ, խնդրեմ, համեցեք ներս,

Միք ամաչի, ոտար չկա.

Ոտար մարդը մեր տուն չի գա:

Դե, մոտեցեք,

Ծանոթացեք.

Ես իմ շեֆն ե՛մ ընկեր Սերգին,
 Ես ընտրովի հյուրեւ անգին:
 Վողջը՝ կարմիր յերիտասարդ —
 Ծիւ ու ծագիկ, կակաչ ու վարդ...

Ու տունն իսկույն կենդանացավ,
 Յերգն ու պարը իրար անցավ:
 Մի քիչ հետո ժողով արին,
 Տիկնիկն առան, մեջտեղ բերին,
 Ել չուզեցին շատ լացացնեն,
 Մորը տվին հանգստացնի:
 Խոսք բաց արին անվան համար:
 Շեֆն ասավ թե.

— Ո՞վ չգիտե:

Վոր անունը շատ մեծ բան ե,
 Յեթե մարդուն սազական ե...

Ու տիկնիկի անվան մասին
 Շատ վիճեցին, շատ բան ասին,—

Վերջը խմբով վորոշեցին

Ու տիկնիկին անվանեցին՝

Ասեմ հիմա —

Պատիկ՝ Կիւսա:

1926 թ.



ՀՆՉՈՒՄ Ե ԶԱՆԳԸ


Հնչում ե արդեն զանգը դպրոցի,
 Աշխատանքային մեր նոր դպրոցի,
 Խմբվում են այնտեղ աղջիկ ու տղա՝
 Վորպես մեղուներ զարնան ծաղկոցի:

Դպրոցի վրա արև ե ծագել,
 Կարմիր շողերը փունջ-փունջ ներս ածել,
 Աղջիկ ու տղա կարմիր են հագել,
 Գարնան հոտավետ մի-մի վարդ դարձել:

Հնչում ե զանգը, մեղմիվ դողանջում,
 Ամենին դեպի նոր դպրոց կանչում,
 Բոլորն ել ուրախ, գնում են սիրով՝
 Մեր սիրտը լցնում կարմիր հույսերով:

Հնչում ե զանգը մեր նոր դպրոցի —
 Նոր-կյանքի ուսման աշխատանոցի —
 Դե՛ հապա առաջ, բախտավոր ե նա,
 Ով այս դպրոցում մի տեղ կունենա:

1921 թ.



ՄԱՅԻՍՅԱՆ ՌԻՂԻ

— Պոսիկ պոեմ —

Արևը շողեց
Վառ ճառագայթներ,
Կարմիր լույս սփռեց
Քաղաք ու գյուղին,

Լուսաշող փուվեց
Նոր կյանքի ուղին...

Մայիսյան ուղին

Լուսաշող պայծառ,
Լուսաշող պայծառ

Մի ծայրից մի ծայր:

Ամեն մի լուսը՝

Մի փայլուն գոհար,

Ումը վոր հասավ՝

Ճակատին թառեց,

Աղջկա-տղի

Կրծքերի վրա,

Մի-մի պլվլան

Արևիկ վառեց,

Պիոներ արեց,

Ճակատին թառեց,


Մայիսյան վոգով

Սրտերը վառեց:

Ա՛յ են վառ շողը՝
Ճիշտ մեր Արփիկն ե.
Արփիկի նման
Աշխույժ, թուրմուն,
Են ել հենց ինքը
Մեր թիր Մարտիկն ե,
Կարմիր բոցի պես,
Վառ ու վառվրուն:
Հրեն և մի փունջ
Աղամանդ շողեր
Վազում են առաջ,
Իրար հետ մրցում.
Լեռների ձյունոտ
Բարձրունքը թողել՝
Մեկ մեկուց արագ
Առաջ են թռչում:
— Են հուր Հրանան ե,
Ես նուր Նվարդը,
Են ալ-Ալմիկն ե
Ես ել Համիկ...
Են լուս-Լուսիկն ե,
Ես հույս-Հուսիկը,
Են կրակ-Կարոն,
Ես մեկն ել Մարոն...
— Ե՛յ, դուք վառ շողեր,

59327.66

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



Արևի ցողեր, —

Հենց ձեզ եմ ասում —

Նդ հւր եք վազում

Դուք եղպես վաղ-վաղ

Ու եղպես ուրախ...

— Դեպի գյուղ, ընկեր,

Այո, դեպի գյուղ,

Դեպի գյուղացու

Ամենայն մի հյուղ —

Գնում ենք շունչ տանք

Յանաժ աղոսին,

Հույս տանք գյուղացուն,

Ապրեցնենք նրանց...

Ձե՞ վոր ենտեղի

Մանուշն ու Մոսին

Մեր ընկերներն են,

Մեզ հետ են սրտանց:

— Ե՛յ հրո ցողքեր,

Արևի զորքեր,

Ի՞նչ եք վազում,

Նդ հւր եք վազում

Դուք եղպես կանուխ

Նդպես անյերկյուղ...

— Մենք... դեպի քաղաք,

Բանվորների տուն.

Ննտեղ մայիսյան

Կամար ենք կապում,

Նոր կյանքի կամար
Ամենքի համար.



Ամեն մի բանվոր

Կամարի մեջտեղ

Մեծ աշխատանքի

Մի զարդն է շքեղ...

— Բանվոր-գյուղացին

Կյանքն են աշխարհի,

Բանվոր-գյուղացու

Ուժը վիթխարի...

1926 թ. մայիս





ԶԱԳՍՈՎ ՊՍԱԿ

— Մանկական խաղ —

I

— Արշալույս,

Աչքդ լույս,—

Բախտը բանեց ձեր սանիկի,
Իմ տիկնիկը համաձայնեց,—

Հրեա կը գան հարսանիքի,
Քեռին Զագսի թուղթը հանեց:

— Ձե՛, չե՛, մի՛ չե՛...

Քա եդ ինչ ե,—

Վոնց թե ախար զաղսով պսակ,
Մի՛թե դա մի հարգված բան ե.

Մի ուրիշը բաս եդ տեսակ
Նորահնար պսակ կանե...
Խոսքդ ի՞նչ ե, աղջի Շուշան,
Տիկնիկներին չտանենք ժամ...

— Սուս ե, մի սոս,

Ա՛յ Արշալույս,

Բաս չե՛ կերթանք յեկեղեցի,
Տերտերների ճանկն ընկնելու.
Հավատացե՛ք յես զգվեցի,
Պետք ե փախչել դրանցից հեռու:
Հիմա կյանքը հիմքից փոխվում՝
Նոր որեր են մեզ լուսանում,
Հինն ու նորը իրար բախվում՝
Նորն ե հնին միշտ դուրս անում.
Կյանքի հետն ել կարգն ե փոխվել՝
Նոր ճամփով ե առաջ գնում.
Հո չե՛նք կարող հնին մեխվել
Ու միշտ ապրել փթած հնում:

II

— Զան... տիկնիկիս հարսանիքն ե,
Քե՛ք կանենք մենք ուրախ-զվարթ,
Ընկերներով տունս լիքն ե,
Ամեն մինը՝ մի հոտոտ վարդ:
Յեկել են, վոր ժողով անեն,
Խորհրդակցեն մեկ-մեկու հետ,

Մի բանաձև, մի միտք հանեն,
 Հինը ժխտեն, կորչի անհետ:
 Ընկեր Սերգին յերգ ե ասում,
 Նա նոր կյանքի հերոս ե քաջ,
 Կրծքի աստղը խոսքին սաղում,
 Ամեն բառն ե մի փունջ կակաչ:
 Թևին կարած փայլուն նշան՝
 Կարմիր զինվոր ընկեր Միշան...
 Զվարճալի ծափ ե տալիս
 Ու պար ածում շուրջն ամենքին:
 Արփիկն ազատ պար ե գալիս՝
 Լենինազարդ դրոշը կրծքին,
 Հարս ու փեսան ամենից շատ
 Խոսակցում են, յերգում ազատ:

III

Յերբ ժողովի հերթը հասավ
 Բոլորն յեկան նստոսեցին,
 Կոստին կանգնեց մի ճառ ասավ՝
 Հենված փափուկ մեծ բազմոցին:
 — Այսոր, — ասավ, — պսակ ունենք,
 Նոր որենքի Զագսով պսակ,
 Տիկնիկներին պսակում ենք՝
 Նոր — կյանքի պես դարուն հասակ:
 Մեր նոր կյանքը վառ դարունն ե
 Ապագա մեծ Կոմունայի,

Երնեկ նրան, ով ձգտում ե
 Հասնել եղպես ապագայի:

Եղ ապագան հմայիչ ե՝
 Մանավանդ նոր սերունդներին,
 Հնի համար մի դահիճ ե՝
 Սուր գերանդին բռնած ձեռին:

Նոր սերունդը դուք եք այսոր՝
 Զահել-ջիվան աղջիկ-տղա,
 Ձեր ույժն ենքան մեծ ե հզոր,
 Վոր ձեր ահից մարդ կը դողա:

— Կեցցե՛, կեցցե՛, ընկեր Կոստին,
 Ծափ տվեցին ամենքն աշխույժ,
 Համաձայն ենք մենք քո խոսքին,
 Այո, մերն ե ամեն մի ույժ:

Այսպես կատարվեց պսակը զագսով,
 Ու կարիք չեղավ վոչ մի տերտերի, —
 Թող կորչեն դրանք իրենց զգեստով,
 Թող մարդկանց չանեն հավատքի գերի:
 1924 թ.





ԱԿՏՅԱԲՐԻՆԱ- ՀՈԿՏԵՄԲՐԱՆՈՒՇ

Յերեկ ընկեր Ակտյաբրինան
Մեզ մոտ յեկավ մեծ—Մոսկվայից,
Մեր աղումբում ընկեր Նինան
Ծանոթացրեց նրա հետ և ինձ:
Ակտյաբրինան մի աղջիկ եր՝
Տասնյոթ գարուն զեռ չտեսած,
Բայց գործի մեջ ջան ու ճիգ եր,
Շատ-շատերից նույնիսկ փորձված:
Նա խոսում եր արագ-արագ,
Առողջ մտքեր արտահայտում
Ու վիճելիս ել շարունակ
Դո ատքերն եր կշռում, դատում:
Նա նորահաս կոմունար եր,
Լենինական վոգով լեցուն,
Հետը վիճելն անհնար եր,
Ձուր եր ամեն տեսակ մրցում:
Յերբ պատահեր վորևե տեղ
Իր պիտներ ընկերներին՝
Վոգևորել գիտեր ուժեղ,
Շեշտելով իր խոսքը վերջին:

— Դուք, էյ ընկեր
Պիտներներ,
Գիտե՞ք արդյոք
Ծագումը ձեր, —

Յեվ կամ գիտեք, թե ով եք դուք.
Ձեզ համար են ասել հատուկ.
— Ձեր արմատի հողն են վարել
Հոկտեմբերյան մեծ դուրսանով,
Ձեր ցողունն է սնունդ առել
Մարքսիստական գիտությունով:
Ձեր ծաղկունքը ցող կըստանան
Մեր կենսաբուխ Լենինիցմից,
Ձեր ճյուղերը կը հաստանան
Համատարած կոմունիզմից:

Թող կեցցե՛ ձեր
Միությունը,
Շեն մնա ձեր
Հիմնած տունը...


Յես գալիս եմ մայր — Մոսկվայից,
Անձամբ յեղա ալանատես,
Խորհուրդների ամեն վայրից
Բյուր վողջույններ բերել եմ ձեզ:
Մեր հանձարեղ Մեծ-ընկերի
Գերեզմանն է այսօր այնտեղ,

Կռում, կոփում Հոկտեմբերի
Գաղափարը մեր մեջ ուժեղ:

Այո, ընկեր
Պրոներներ,
Թող կեցցե՛ք ձեր
Միությունը,
Շեն մնա ձեր
Հիմնած առևանդ:


Իզուր չեյին նրան կոչել՝
Ակոյաբրինա-Հոկտեմբրանուշ,
Տեղն ու տեղը նա մի կոչ եր՝
Վոր հնչում եր անուշ-անուշ:

1924 թ.



ԳՅՈՒՂ ՈՒ ՔԱՂԱՔ

—Մանկական խաղ—



Ռուզան. - Յեկեք խաղանք
Դյուղ ու քաղաք,
Սա մի աշխույժ խաղ ե նոր,
Նսպես ուրախ,
Մի ուրիշ խաղ
Ձենք խաղացել վոչ մի ուր:

Խաղացողներ. — Դիտենք, գիտենք,
Մենք լավ գիտենք,
Սիրած խաղն ե բոլորի,
Յեկեք խաղանք,
Որինակ տանք—
Ձիմացողն ել սովորի:

Ռուզան. — Դե վոր գիտեք,
Ձեզ տեղ գտեք,
Բաժանվեցեք խմբերի,
Ինչպես ասի՝
Յերկու մասի,
Ես ձեր տեղն ե, ես մերի:

Խաղացողներ. — (բաժանվելով 2 խմբի)
Ով աղաք-աղաք
Նա հասնի քաղաք:

Ով հետի-հետի՝
Վոտները փետի...

Ռուզան. — Դուք քաղաքն եք,
Դուք ել գյուղն եք,
Այ, ես գիծն ել՝ ձեր ճամփան,
Դե ամենքդ,
Ամեն մեկդ
Ներկայացրեք մի-մի բան:

Մեկը ֆաղափ խմբից. —

Յես գործարան եմ,
Հազար գործ կանեմ,
Հազար գործ կանեմ,
Ապրանք կհանեմ....
Մատորս ե գործում՝
Հուր ու բոց ծոցում.
— Թակ-թակ, թակ-թակ...
Անիվս պըտտում,
Բեմենը խըտտում—
— Ֆը՛ր-ֆը՛րրը, ֆը՛ր-ֆը՛րրը...
Շհակս ե շըվում,
Յեվ ուժգին ծըվում.—
— Ո՛ւֆ-ո՛ւֆֆֆ, ո՛ւֆ-ո՛ւֆֆֆ...
Դոլորշիս շաշում,
Շաշում շառաշում, —
— Ֆը՛շ-ֆը՛շշշ, ֆը՛շ-ֆը՛շշշ...

Շուտով յես գյուղում
Ճյուղ եմ բանալու
Ու հենց իր տեղում
Դործ եմ անելու...

Գյուղի խումբը. — (ծափ տալով)
Կեցցե ընկերը, գյուղը գնացող,
Կեցցե նա, գյուղին
Բարիք կամեցող:

Գյուղի խմբից մեկը. —

Իմ անունը ջրաղաց ե,
Մեջս ալյուր և հաց ե,
Դուռս ամեն որ բաց ե.
Ունեմ,
Չունեմ՝
Յերկու մեծ քար—
Ջրաղացաքար՝
Մեկը վերից,
Մեկը վարից՝
Յեվ փետից կախ
Մի հատ չախչախ:
Վերի քարս
Պտույտ գալով՝
Աղուն կաղա.—
Դառ-գոռ, բըռո՛ւ ոռո...
Դառ-գոռ, բըռոռ, ոռո...

Իսկ չախչախս

Զըխչըխկալով՝

Կը ճըղ-ճղա.—

Չախ-չախ, ինչ վոր աղաք,

Առեք, տարեք կեսը քաղաք,

Չախ-չախ, ինչ վոր աղաք՝

Առեք-տարեք կեսը քաղաք...

Քաղաքի խումբը (ծափ տալով)

Կեցցե՛ք ընկերը քաղաքի համար,

Կեցցե՛ք և գյուղի բարիքն

անհամար...

Մեկը քաղաքի խմբից.—

Յես տպարան եմ՝

Դրքի գործ կանեմ,—

Կը տպեմ թե գիրք

Յեմ թե լրագիր...

Լույս եմ տարածում,

Մարդու միտք բացում,

Մամուլս ե գործում

Անգաղար գոչում.—

— Թուղթ տնւրրր... շուտ...

Շուտ տնւրրր... շուտ...

— Թուղթ տնւրրր... շուտ,

Շուտ տնւրրր... շուտ...

Գիրք ու լրագիր,

Տպում եմ, ղրկում,

Ու մեր գյուղերից

Խաւարը խրկում...

— Թուղտ տնւրրր... շուտ.

Շուտ տնւրրր... շուտ...

Գյուղի խումբը— (ծափ տալով)

Կեցցե՛ք ընկերը գյուղը գնացող,

Կեցցե՛ք նա՝ գյուղին բարիք

կամեցող...

Գյուղի խմբից մեկը.—

— Յես ել գերանդի՝

Գործիք եմ հանդի,

Գնում եմ, գալի՝

Խոտ եմ վեր տալի.—

— Հեպ-հոպ-հեպ...

Հեպ-հոպ-հեպ...

Դաշտերը հարում,

Լասեր եմ շարում,

Մարերի լանջում

Տաղեր եմ կանչում.—

— Հեպ-հոպ-հեպ...

Խոտս կկիսեմ,

Կեսը կգլղեմ,

Կեսն ել կբարձեմ

Քաղաք կուղարկեմ.—

— Հեպ-հոպ-հեպ...

Քաղաքի խումբը (ծափ տալով)

Կեցցե՛ ընկերը քաղաքի համար,
Կեցցե՛ և գյուղի բարիքն
անհամար:

Քաղաքի խմբից մեկը. —

Յես բեռնակիր
Մի ավտոմոբիլ,
Կրում եմ շուտ-շուտ
Հաղար-հաղար փութ,
— Գը՛ռռռ, տրաք,
— Գը՛ռռռ, տրաք...

Ինձ համար մեկ է
Ինչ ճամփա լինի,
Զեռքինդ ղեկ է,
Զի չե, վոր կանգնի. —
— Գը՛ռռռ, տրաք,
— Գը՛ռռռ, տրաք...

Կուգեմ գյուղ գնալ,
Միշտ գնալ ու գալ,
Ապրանքներ տանել
Յե՛վ գյուղացուն տալ. —
— Գը՛ռռռ, տրաք,
Գռռռ, տրաք...

Գյուղի խումբը — (ծափ տալով)

Կեցցե՛ ընկերը գյուղը գնացող

Կեցցե՛ նա՛ գյուղին բարիք
կամեցող...

Գյուղի խմբից մեկը. —

Յես տրակտոր եմ,
Շոգի շնչող եմ,
Մեր սովխոզների
Արտերն ընդարձակ
Միշտ յես կվարեմ,
Ակոս կշարեմ,
Վոր են սև հողից
Կարմիր հաց հանեմ:
Համ գյուղս կուտի
Յե՛վ կկշտանա,
Համ վողջ քաղաքը
Բաժին կստանա...

Քաղաքի խումբը — (ծափ տալով)

Կեցցե՛ ընկերը քաղաքի համար
Կեցցե՛ և գյուղի բարիքն
անհամար:

Մեկը քաղաքի խմբից. —

Յես սավառնակ եմ,
Փայտի թռչնակ եմ,
Բենզին է սիրտս,
Հոգիս է գիրկս. —
Թռչում եմ թռչում,

Ամեն տեղ շրջում. —
 — Գը՛ռռռ, գը՛ռռռ...
 Ենպես եմ վազում՝
 Ծափ պես հասնում. —
 — Թը՛ռռռ, Թը՛ռռռ...
 Մնվախ, անյերկյուղ
 Կը թռչեմ և գյուղ,
 Գյուղը կը տանեմ
 Բարիք հազար, բյուր —
 — Թը՛ռռռ, Թը՛ռռռ...

Գյուղի խուսքը — (ծափ տալով)
 Կեցցե՛ք ընկերը գյուղը գնացող,
 Կեցցե՛ք նա՛ գյուղին բարիք
 կամեցող...


Մեկը փաղափի խսրից. —
 — Դա՛-գա՛-դա՛-գե՛,
 Դա՛-գա՛-դա՛-գե՛...
 Թը՛շ-Թը՛շ-Թը՛շ-Թը՛շ...
 Ֆուլ-ֆուլ, ֆուլ-ֆուլ...
 — Ֆուլ ու ու ու ու ու ու...
 — Յես գնացք եմ,
 Գյուղն եմ գնում,
 Գյուղի համար
 Ապրանք տանում.
 — Ու-ո՛ւ, ո՛ւ-ո՛ւ...
 Գյուղ յեկողը՝
 Թող գա տանեմ՝

Գյուղի համար
 Դործիչ անեմ. —
 — Ֆուլ-ֆուլ, ֆուլ-ֆուլ...
 Ֆուլ ու ու ու ու ու ու...

Քաղաքի խսրի վանուկները. —
 (Երար հեռից շարվելով՝
 բոլորը միասին կրկնում են). —
 — Դա-գա՛-դա՛-գե՛
 Դա-գա՛-դա՛-գե՛

Իսկ ռոգեկառգ ներկայացնողը
 միեկնույն ժամանակ ասում է. —
 — Ի՞նչ ծուխ ու բոց,
 Ի՞նչ գոլորշի, —
 — Ի՞նչ դրդըրդոց,
 Քամի փռի...
 — Վը՛զզզզ...
 Ֆուլ-ֆուլ ու ու ու ու...

Այս միջոցին գյուղի խուսքը
 ծափ և օսլիս ու յերգում. —
 — Կեցցե՛ք... Կեցցե՛ք...
 — Բարով յեկաք,
 Հազար բարին.
 Մեղ մոտ կացեք
 Ամբողջ տարին...
 — Կեցցե՛ք... Կեցցե՛ք...



Յ Ե Ր Գ

Մուրճն արագ-արագ
Յերկաթը տաք-տաք
Ծեծում ե կանչում
Ու բացականչում.

— Հոպ, դե բեր,
Հոպ, դե բեր,
Յես եմ, ես
Հոկ-տեմ-բեր,
Հոկտեմբեր...

Կռանը լսում,
Հուզվում ե, հուզում,—
— Յես եմ, յես, ասում
Ու բացականչում. —

Հոպ, դե բեր,
Հոպ, դե բեր,—
Յես ինքս եմ
Հոկ—տեմ—բեր,
Հոկտեմբեր...

Մանգաղը արտում
Մի կարող ձեռքում

Իր գործն ե տեսնում,
Իր յերգը յերգում. —
Հոպ, դե բեր,
Հոպ, դե բեր,
Յես եմ, յես
Հոկ — տեմ — բեր,
Հոկտեմբեր...

Իսկ մեծ գերանդին
Արաի յերանդին,
Յեվ կամ խոտհարքում
Համերգ ե սարքում. —
— Հոպ, դե բեր,
Հոպ, դե բեր.
Յես ինքս եմ,
Հոկ — տեմ — բեր,
Հոկտեմբեր...

Ու այսպես ահա
Մուրճն ու կռանը
Կերտեցին այսօր
Աշխույժ ու անհաղթ
Զյուլա բանվորին,
Մանգաղ գերանդին՝
Գյուղացուն հզոր,
Իսկ այդ յերկուսը —
Կարմիր Զինվորին:

Յե՛վ այս յերկուսի
 Հուժկու միությամբ
 Ծնվեց մեզանում
 Մի Մեծ Հոկտեմբեր,

Յե՛վ այս յերկուսի
 • Խոր գիտակցությամբ
 Մնվեց մեզանում
 Կարմիր Հոկտեմբեր...

1924 թ.



ՀՈԿՏԵՄԵՐԸ

— Թում-բումփ...
 — Բում-բում-բումփ...
 Թնդանոթների
 Ահարկու զարկեր
 Թունդ էյին առել,
 Չորս կողմը բաղխում. —
 Են մարդկանց սիրտն էր,
 Վոր խաղս էր ընկել՝
 Մահվան դեմ ենպես
 Ուժեղ բաբախում:
 Անվերջ տեղում էր
 Գնդակի տարափ,
 Շուրջը տարածում
 Մահաշունչ սարսափ, —
 Են քաջամարտիկ
 Ուժն էր հերոսի,
 Ասպարեզ հանել
 Գնդացիք—մոսին...

—
 Գուգոկ ու կոչնակ,
 Շվի ու շշակ,

Ծոր ելին տվել՝
 Շվեմ, շրվշրվում. —
 Են՝ ճիչ եր և կանչ,
 Վոր խառնիճաղանչ
 Յեվ աղմկում եր,
 Յեվ ճշում-ծվում:

—
 Ու՛ յերկւր
 Յերկւր, —
 Գնդակ ու վառուդ,
 Բոմբ ու թնդանոթ,
 Գնդացիք, հրացան
 Իրարով անցան...
 Յեվ այնքան-այնքան
 Իրարով անցան,
 Թշնամուն արին
 Իսպառ ցիրուցան:

—
 Եսպես կատարվեց
 Պրոցեսը Հաղթի, —
 Մեր Հոկտեմբերյան
 Մեծ զորամարտի...
 Եսպես եր ահա,
 Վոր ենպես անմահ՝
 Կարմիր-հաղթանակ
 Խլվեց թշնամուց,

Վորին ձգտել ենք
 Ամենքս վաղուց:

—
 Այսոր
 Բոլոր
 Բանվորները
 Գործարանում՝
 Հուզում,
 Հուզվում,
 Ծառս են լինում
 Ու ծառանում,
 Ճշում,
 Կանչում. —
 — Ե՛յ ընկերներ,
 Մեր ույժն և վառ
 Հոկտեմբերի.
 Են, մեր անմահ
 Ու անվեհեր
 Հոկտեմբերի... —

—
 Իսկ գյուղացին՝
 Հարյուր-հազար,
 Արթուն,
 Զվարթուն,
 Հանդիպածին
 Կասի — տեսար...

Այսօր
 Հզոր
 — Մենք ենք ույժը
 Հոկտեմբերի, —
 Են վառ
 Ամառ
 Ու բոցավառ
 Հոկտեմբերի:

Իսկ դուք
 Հեռու,
 Ե՛յ ընկերներ,
 Վեր գործում եք
 Անդադար,
 Յե՛վ դեռ այսօր
 Շահագործվում
 Անարդար,
 Քարտաշ եք թե՛
 Վորմնադիր,
 Յե՛իս կրող թե՛
 Քաղ ու կիր, —
 Վարպետ եք թե՛
 Աշակերտ,
 Վո՛չ ժամ ունեք,
 Վո՛չ ել՝ հերթ,

Ձեզ ե կանչում,
 Այո, ձեզ
 Հոկտեմբերը
 Հաղթական
 — Պրոլետարներ՝, բոլոր
 Յերկրների՝
 Միացեք...



ՇՈՒՅԱՆՆԵՐ



Շուշաններս այս առավոտ շուտ արթնացան,
Առավոտվա կարմիր լուսով գվարթացան,
Շատի կրծքին են վաղորդյան ցողն եր սառել,
Լալ ու ալմաստ, կարմիր մարջան ուլունք շարել, —
Շատի վզով արշալուսի ցողն եր փարել՝
Այ ու ալման, ապարանջան, փողկապ դառել:
Շուշաններս եսպես պճնված, եսպես չքեղ,
Կանգնել եյին ծաղկանոցիս մարգի մեջտեղ,
Գլխիկները բռնել եյին դեպի վերև
Ու լուռ ձայնով յերգում եյին կարմիր արև. —
Նրանց մարգը թեև փոքր եր, բայց և ծաղկոտ,
Նրանց յերգը թեև անձայն, բայց ծիծաղկոտ:
Շուշաններիս վեր նայվածքում կյանք եր ցոլում,
Անթիվ-անվերջ նոր շուշաններ շուրջը ծլում, —
Շուշաններիս կարմիր յերգում կյանք եր բուրում,
Ծիլ ու ծաղիկ կարմիր կյանքով հրապուրում...

1926 թ.

ՄԱՅԻՍԻ ՄԵԿ

— Գայերգ —

Քանի խիզախ,
Վեհ հոգիներ մտան աշխարհ՝ ես առավոտ,
Քանի կարիչ
Ու քաջ սրտեր գտան իրար՝ ես առավոտ.
Քանի յերկիր,
Քանի լեզվով հնչեց — կեցցեք՝ ես առավոտ,
Քանի բերան
Կրկնեց՝ կեցցե մայիսի մեկ ես առավոտ...
Եղ սրտազին
Ուրախության կեցցեներով՝ անթիվ — անվերջ,
Կեցցեների
Եղ համերգում վառ ձեներով՝ անթիվ — անվերջ,
Խնչքան մանուկ՝
Տղա-աղջիկ գեղգեղացին անթիվ — անվերջ,
Գեղգեղացին —
Կեցցե՛ բանվոր ու գյուղացին անթիվ — անվերջ...
Ու մանկության
Կեցցեները ես առավոտ՝ մեկ մայիսին,
Անկեղծ սրտի

Ձոներդ դարձան ես առավոտ մեկ մայիսին,
 Եդ ձոներդով
 Աշխատանքի փառքը թնդաց մեկ մայիսին
 Եդ փառքի հետ
 Հաղթանակի կյանքը խնդաց մեկ մայիսին:
 Հաղթանակող
 Հզոր կյանքը ես առավոտ ամենուրեք,
 Աշխատանքի
 Մեծ տոն հիմնեց ես առավոտ ամենուրեք,—
 Ամեն տարի,
 Յերբ գարուն գա, բանա հանդես ամենուրեք,
 Ամեն տարի
 Մեկ մայիսը տոնվի եսպես ամենուրեք:

1928 թ.



ԱՄՐԱՆ ՈՐԵՐԻՆ

Ամառը յեկավ
 Նուրբ թավիշ հագած,
 Հանդ, արտ ու արոտ,
 Վոսկի ու զմրուխտ:

Ցողուն ե տվել
 Ցորենը արտում,
 Ցողուն ե տվել
 Ու հասկ ե բռնել.

Յելել ե քամին
 Ու մենամարտում,
 Հովը խաղում ե
 Ու զովը յերգում:

Հասկերը խմբով
 Քամուց չեն վախում,
 Գնում են գալիս
 Մեջք-մեջքի տված

Ու շարքով ամուր
Իրար ուժ տալիս:
 Խշխշում անուշ
 Ու յերգ են ասում:

Կարծես թե ծով ե
Յելել ե հոսում,
 Մեր բերքի ծովն ե
 Ծափում ու ծփում:

Լեզու յեն կտրել
Սար ու ձոր ենտեղ,
 Լեզու յեն կտրել
 Պատասխան տալի,

Կանչողի ձայնից
Ավելի ուժեղ՝
 Են պատասխանն ե
 Դեպի մեզ գալի:

Արձագանքում են
Հանգ ու անդաստան,
 Իսկույն յետ տալիս
 Խոսքիդ պատասխան:

Այ քեզ հրաշալիք —
Եդ պատասխանում
 Դարձյալ լսում ես
 Մի ծանոթ անուն:

Պիտեւներն են —
Ճամբար են յեկել,
 Ու սարի դռին
 Վրաներ խփել:
Այժմ զիլ յերգում
Խաղում են, կանչում
 Նուրբ թավիշ հագած
 Բնության գրկում:





Լ Ե Ն Ի Ն

(ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂ)

բեմ, բեմի վրա 10—15 պիոներ

Նիմել. — Ընկերներ,
Վոր եղպես ե,
Յեկեք բաս մենք
Շրջան կազմենք,
Հիմա խաղանք մենք
«Լենին»:
Լավ կարդ պահենք
Շատ չնայենք

Շրջանի նեղ

ու լենին...

Պիոներներ. — Ջան-ջան, խաղանք
«Լենին» խաղանք,
Շատ դուրեկան
Խաղ ե նոր,—
Համ լավ խաղ ե,
Համ ուրախ ե.
Խաղ կանենք մենք
Ամեն որ...

Նիմել. — Դե, շուտ շրջան,
Ընկերներ ջան,
Բռնենք միմյանց
ձեռքերը,
Ով չգիտե,
Թող նա դիտե —
Վոնց ե խաղում
ընկերը:

Բոլոր. — (կազմում են շրջան):

Կիսիկ. — Յես քո կողքին,

Նիմել. — Յես քո կողքին,
Դե շուտ, Կիսիկ,
ձեռքդ տուր,

Առն. — Յես ել քեզ մոտ,

Լուսիկ. — Դե յեկ, Առն,

Շուտ ձեռքդ տուր,
 ձեռքդ տուր...

Նիմել. — (Շրջան բռնած).

Ահա եսպես,
 Նոր կյանքի պես,
 Ամուր պահենք
 Մեր շղթան,
 Վոր ինքնակամ
 Չար մարդ անգամ,
 Ներս չմտնի
 Մեր շրջան...

Դպրոց. — (Պրոներունին զանգահարում
 և բեմի մյուս անկյունից).

— Յես նոր դպրոցն եմ
 Աշխատանքային,
 Վողջ նվիրվել եմ
 Մեծ ապագային,
 Դրոշմ լենինն է,
 Զահմ՝ լենինիզմ,
 Վոր լույս է սփռում
 Ամբողջ աշխարհին:
 Լուսաշխատանքի,
 Կրթության գործում
 Յես եմ աշխատում
 Ու անդուլ գործում:
 Մեր մեծ ընկերոջ

Ավանդներն իմ մեջ
 Հնչում են ուժգին,
 Հնչում են անշեջ,
 — «Ինչ ել, վոր լինի,
 Լենինն է ասել, —
 Մեր առաջ ունենք
 Մենք հսկա խնդիր,
 Անգրագետ յերկրում
 Յեվ վոչ մի գեպքում
 Մենք չենք կառուցի
 Մեզ մոտ սոցիալիզմ»...
 ...Ու սովբեցնում եմ
 Ահա ամենքին...

Շրջանի ընկերները. — (Ծափ տալով)
 — Կեցցե՛ք ավանդը

Ընկեր Լենինի,
 Նա պետք է մեզ միշտ
 Ուղեցույց լինի:

Դպրոց. — Կեցցե՛ք և դուք,
 Ձեզ եր հատուկ
 Սիրում ընկեր
 Իլիչը,
 Դուք ել պետք է
 Դառնաք՝ կյանքի
 Լենինյան մեր
 Գործիչը:

Գործարան. — (Պիոններ, բանվորի հագուստով, բեմի մի այլ անկյունից գործարանի սուլոցից հետո ասում է).

— Յես մի հոյակապ,

Նոր գործարան եմ,

Անթիվ գործերի

Յերկար շարան եմ...

Լենինն իմ շունչն է,

Լենինիդմը՝ կյանք,

Դրոշիս լոգունգն է

Անդուլ աշխատանք:

Լենինի խոսքը

Նույնպես է իմ մեջ

Հնչում է ուժգին,

Հնչում է անվերջ...

— «Մեզ հարկավոր է,

Լենինն է ասել. —

Դրսի ոգնության

Յերբեք չսպասել.

Հենց այսօրվանից

Բարձրացնել միշտ վեր՝

Արդյունաբերող

Վողջ ուժերը մեր»:

Մատորս է գոռում,

Ռեմենը ֆոռում...

Դինամի յերզը

Շուրջս է փոփում...

Մեծ ինդուստրացման

Գովքը տարածում...

Շրջանի քնկերներ. — (Ծափ տալով)

— Կեցցե ավանդը

Ընկեր Լենինի.

Նա պետք է մեզ միշտ

Ուղղեցույց լինի:

Գործարան. — Կեցցեք և դուք.

Դուք եք հատուկ

Մեր նոր կյանքի

բույսերը,

Դուք մեզ համար

Կլինեք վառ —

Լենինյան վեհ

հույսերը:

Տրակտոր. — (Մի պիոններ, գյուղական հագուստով, տրակտորի ղեկը ձեռքին, շահ է տալիս ու ասում).

— Յես տրակտոր եմ,

Շոգի շնչող եմ,

Յես վար եմ անում,

Բյուր գործ կատարում.

Մի տեսեք ասլա՝

Իմ պոչին կապած

Յերկար շարքացան,
Յանում եմ ե՛նքան,
Վոր հերիք անի
Բերքը ես տարի
Թե մեր պետության
Հացամթերման

Յեվ թե մեր գյուղին:
Լենինը սիրաս ե,
Ղեկա՝ Լենինիդմ,
Լենինն ե ավել
Ինձ մի մեծ դեվիդ,
Վոր իրար կապեմ
Արտերը թիզ-թիզ:
Կառուցվի կոլխոզ,
Հացի գործարան...

Ու ախոս-ախոս
Վարում եմ, վարում,
Աշնանացանի
Յերերն եմ շարում,
Աշխատում, խաղում:

Շրջանի ընկերները.—(Ծափ տալով).

—Կեցցե՛ ավանդը
Ընկեր Լենինի,
Նա պետք ե մեզ միշտ
Ուղղեցույց լինի:

Տրակսը.—Կեցցե՛ և դուք—

Դուք եք հատուկ
Մեր նոր գյուղի
գործիչը.
Զեզ եր սիրում
Ու փայփայում
Մեր ուսուցիչ

Իլիչը:

Ելե՛ք տղայան.—(Բեմի չորրորդ անկյունից, մի պիոներ մեքենավարի շորերով վառում ե ելեքորդամ-պը ու ասում).

—Յես ելեքորական
Մի կայարան եմ,
Իմ ելեքորական
Ույժը կտանեմ,
Հազար ու մի տեղ
Հազար գործ կանեմ:
—«Ելեքորական ույժ, —
Լենինն ե ասել,—
Յեվ խորհրդային
Շինարարություն—
Կհավասարվի
Նա սոցիալիզմի:» —
Ու յես ձգտում եմ
Հատուկ յեռանդով
Ույժս տարածել

Հենց ամեն մի տեղ,
Իմ կայարանից
Գեղերի հանդով
Լույս մատակարել
Մի գեղից մի գեղ...

Շրջանի ընկերները. — (Ծափ աւելով).

— Կեցցե՛ս ավանդը
Ընկեր Լենինի,
Նա պետք է մեզ միշտ
Ուղղեցա՛յց լինի...

Ելեֆսոկայան. —

Կեցցեք է դուք,
Մեր պատանի
հերոսներ,
Մեծ ապագան
Մերոնք կտան
ձեզ նվեր...

Ընկերները. — (Բոլորը ծափ են տալիս).

Կեցցե՛ ես խաղը
Ընկեր Լենինի,
Թող սա մեզ համար
Որինակ լինի...

Մանկական Ինստիտուտը. —

Մենք գավակներ ենք ազատ
մարդկանց,

Ժրաջան կոմունայի ծաղիկ,
Հրաթե ազատությունը մեր առաջ
Բացեց իր այգին յերջանիկ...
Մենք ծաղիկ ենք ծաղկունքի
Յեւ ծիւեր նոր կյանքի.
Այլ կակաչ ենք գարունքի.
Յեւ վառ բոցը հուր-կրակի:

(Վարագույր լողալով իջնում է)



ԱՅԻԱՐՅԻ ՀԱՄԱՐ

Յերբ արշալուսին՝
 Նոր բարի—լուսին,
 Շշակն ե սուլում
 Մեծ գործարանի,
 Բանվորը յեկում
 Գործի յե գնում,—
 Առաջին խոսքն ե
 Նրա բերանի՝
 —Լենին...

Յերբ առավոտյան՝
 Աշակերտության
 Յերթն ե զրնդում
 Դեպի նոր-դպրոց,
 Տղի-աղջկա
 Զրույցը վոր կա՝
 Նա վոչ այլ ինչ ե,
 Դարձյալ յեթե վոչ՝
 —Լենին...

Յերբ զորքն ե շարժվում
 Ու գնքի վարժվում,
 Կամ զինվորական

Շարքեր ե կազմում,
 Կամ նշան ստանում
 Ու հանգստանում՝
 Գիտեք թե ինչ են
 Ասում ու խոսում՝
 —Լենին...

Կամ յերբ գյուղացին
 Ուսին բահ, կացին
 Գործի յե դիմում
 Առավոտը վաղը.
 Ելել ե արդեն
 Խոր քնից զարթել
 Ու մի անուն ե
 Նա տալիս հաճախ՝
 —Լենին...

Լենինն ե, վոր կա՝
 Գործի ուղեցույց,
 Խոսքի առարկա,
 Ուսմունքի զրույց
 Յեվ խորհուրդ հսկա...

Լենինն ե վոր կա՝
 Նոր կյանքի աղբյուր,
 Կյանքի որինակ,
 Լույսը համասփյուռ
 Կարմիր-արեգակ:

Լենինն է վոր կա՝
Անըսպառ յեռանդ,
Բնատուր ավանդ—
Աշխարհ է յեկեկ՝
Աշխարհի համար:

1925 թ.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Յերես

1. Հակոբ Աղաբաբ	5
2. Իմ ծաղիկները	9
3. Հոկտեմբերիկին	11
4. Կիմա	12
5. Հնչում է զանգը	15
6. Մայիսյան ուղի	16
7. Զագսով պսակ	20
8. Ակտիաբրինա-Հոկտեմբրանուշ	24
9. Գյուղ ու քաղաք	27
10. Յերգ	36
11. Հոկտեմբերը	39
12. Շուշաններ	44
13. Մայիսի մեկ	45
14. Ամբան որերին	47
15. Լենին	50
16. Աշխարհի համար	60

ՀՀ Ազգային գրադարան



NL0390994

6358

4466 6 60 4.

1 165
Ca 210.4

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
С С Р

